ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/59

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարան
Բողոք բերող՝ «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Ղափյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ -21/02» ծածկագրով գնանշման հարցում, ասֆալտապատ փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 02.07.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է չեղյալ հայտարարել «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ.-ին կայացված որոշումը, վերականգնել «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02» ընթացակարգին «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի մասնակցության խախտված իրավունքը՝ ճանաչելով հաղթող մասնակից:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 02.07.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 01.07.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/10747-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 02.07.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը, որը նույն օրը մակագրվել է Բողոքներ քննող անձին:

02.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/59 համարի ծածկագիրը:

14.07.2021թ.-ին և 23.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 14.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.07.2021թ.-ին:

2. **<u>«Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 02.07.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24-ը հունիսի 2021 թ.-ի կայացած և 28-ը հունիսի 2021թ.-ին տեղեկագրում հրապայակված N 2 նիստի արձանագրությամբ կայացված որոշում, ըստ որի «ԱՅ ՔԵՆՍԹՐԱՔՇՆ ՍՊԸ»-ի հայտը մերժվել է լիցենիայի բացակայության պատճառով:

ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարանի կայմից 17.06.2021թ.՝ին տեղեկագրում հրապլպոսկվել էր ՀՀ Շիրակի մարզի ՆՈՐ ԿՅԱՆՔԻ Л 1Մէ13ՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԴ ՍԼՐ «ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ ՆՈՐ ԿՅԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՈՒՄ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ» գնման

ընթացակարգի հրավեր, որի հայտերի բացումը սահմանված էր 24.06.2021 թ.-ին, ժ. 11:00-ին: «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն Էդգար Փոթոյանի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է զնման ընթացակարգին մասնակցության հայտ: Ներկայացված հայտը ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին բավարարող, գրանցվել է գրանցամատյանում:

Գնահատման փուլում ներկայացված ծրարի հրավերով պահանջված փաստաթղթերի առկայությունը ևս գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի հրավերի պահանջների բավարար:

(«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի, 30-րդ հողվածի 1-ին մասի, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ կետի պահանջներին համապատասխան և հրավերով պահանջված «Մասնակցության դիմում հայտարարություն հավելված 1» «Գնային առաջարկ հավելված 2» և կազմակերպության կողմից հաստատված լրացված ծավալաթերթ-նախահաշիվ):

Բացի «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ից, ընթացակարգին մասնակցության հայտ էր ներկայացված ևս մեկ մասնակից:

Հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում երկու մասնակիցների բավարար գնահատված հայտերի ներկայացումից հետո պարզ է դարձել, որ «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն հանդիսանում է ընտրված մասնակից, քանի որ ներկայացրել էր նվազագույն գնային առաջարկ: Նիստի ընթացքում ՍՊԸ-ի տնօրենին ներկայացվել է բանավոր պահանջ, որ անհրաժեշտ է ներկայացնել «Քաղաքաշինության բնագավառի շինարարության իրականացման լիցենզիա, տրանսպորտային ներդիրով»:

«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն նշվածի վերաբերյալ չի ստացել որևէ գրավոր պահանջ:

«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի տնօրեն Է. Փոթոյանի կողմից հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովին ներկայացվել է, որ պատվիրատուի կողմից կատարվելիք շինարարական աշխատանքները ըստ ՀՀ գործող օրենսդրության համարվում են շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներ, քանի որ ըստ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 9-րդ հողվածի 2-րդ պարբերության շինարարություն իրականացնողները պարտավոր են ունենալ համապատասխան գործունեության իրավունք: լիցենզիա:

Նույն օրենքի 21-րդ հոդվածի համաձայն քաղաքաշինության բնագավառում լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին Հայաստանի

Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Համաձայն լիցենզավորման մասին ՀՀ օրենքի լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը սահմանող 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 17-րդ կետի 3-րդ ենթակետի քաղաքաշինության բնագավառում լիցենզիան տրամադրվում է շինարարության իրականացման (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների) համար:

Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը քաղաքաշինական բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից համակարգվող քաղաքաշինական թույլտվությունների առցանց տրամադրման համակարգի միջոցով Կառավարության սահմանած կարգով: 5-րդ պարբերությամբ սահմանում է, որ շինարարության թույլտվություն չի պահանջվում Կառավարության սահմանած ցանկում ներառված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնություն ունեցող աշխատանքների համար, եթե դրանք չեն խոչընդոտում անշարժ գույքի նպատակային օգտագործումը և չեն հակասում սահմանված սերվիտուտներին:

ՀՀ կառավարության <<Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավայության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> 19-ը մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման 26-րդ կետով Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտները ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հինգ կատեգորիաներով: 26-ըդ կետի 1-ին երթակետն է ցածր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ I կատեգորիա.

Որաշման 27-դ կետի 1-ին ենթակետը սահմանում է. որ (վերը նշված) 26 դ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման, ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման, ընթացիկ պահպանման, տարածքների բարեկարգման և այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 Ն որոշման հավելված 4 ով սահմանված է ցանկ, որում ներառված են օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 Ն որոշման N 1 հավելվածի 26-դ կետի 1-ին ենթակետով, 27-դ կետի 1-ին ենթակետով և 136-դ կետով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող ընթացիկ նորոգման, միջին նորոգման,

ընթացիկ պահպանման, ներքին հարդարման, բարեկարգման և այլ շինարարական աշխատանքները:

Ըստ 7-րդ կետի 11-րդ ենթակետի ԺԴ) պարբերության շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներ են համարվում ավտոմոբիլային ճանապարհների, համայնքների փողոցներ ծածկի վերին շերտի մաշված և քայքայված հատվածների վերականգնում, անհրաժեշտության դեպքում նորոգվող հատվածի փոսային նորոգում, ֆրեզում, հարթեցնող շերտի տեղադրում, առանձին հատվածների պատվածքի քայքայված տեղամասերի փոխարինում նորոգվող ճանապարհահատվածի մակերեսի ոչ ավելի, քան 3 %-ի չափով: Հետևաբար լիցենզիայի ներկայացման պահանջը անհիմն է:

28-ը հունիսի 2021թ-ին տեղեկագրում հրապարակված N 2 նիստի արձանագրությունից տեղեկացել ենք, որ գնահատող հանձնաժողովը առանց հաշվի առնելու ներկայացված փաստերը, խախտելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 59-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, կայացրել է ՀՀ գործող օրենսդրությանը հակասող որոշում և որոշել է «Այ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է լիցենզիայի բացակայության պատճառով և կամայականորեն հաղթող է ճանաչվել «Ճանշին» ՓԲԸ-ն:

Վերը թվարկվածը հաշվի առնելով գտնում ենք, որ պատվիրատուի կողմից խախտվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածների պահանջները, ինչը խախտել է «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի օրնական իրավունքները:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է չեղյալ հայտարարել «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ.-ին կայացված որոշումը, վերականգնել «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02» ընթացակարգին «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի մասնակցության խախտված իրավունքը՝ ճանաչելով հաղթող մասնակից:

«Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն 07.07.2020թ.-ի թիվ 9/2021 գրությամբ ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ -21/02» ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված և Ձեր կողմից ընդունված բողոքի մասով ընկերության դիրքորոշումը ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարանի ներկայացրած դիրքորոշումից հետո գրեթե փոփոխության չի ենթարկվել, քանի որ, ընթացակարգի գնահատող հանձնաժոդովը կազմավորվում և գործունեություն է ծավալում համաձայաև ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման)-ին կետի պահանջներին: Համաձայն Կարգի 15-րդ կետի 2-րդ նախադասության գնահատող

հանձնաժողովի անդամը պետք է ունենա մասնակիցների որակավորումը և առաջարկները գնահատելու համար պահանջվող մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է գնման առարկային համապատասխան:

Ծանոթանալով ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարանի ներկայացրած դիրքորոշմանը պարզ դարձավ, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը չի բավարարել Կարգի 15-րդ կետի պահանջներին: Ներկայացված դիրքորոշումը աղերս չունի ՀՀ-ԱՆՃ գործող, ոլորտը կարգավորող օրենսդրական պահանջների հետ:

Ներկայացված դիրքորոշման մեջ ասվում է, որ նշված աշխատանքները չեն կարող դասվել 596-Ն որոշման 26-րդ կետի 1 ին ենթակետով սահմանված ցածր ռիսկայնության աստիճանի 1 ին կատեգորիայի աշխատանքների թվին, այլ դասակարգվում են 3-րդ ենթակետով սահմանված միջինից բարձր ռիսկայնության /3 րդ կատեգորիայի/ օբյեկտների թվին:

ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596 Ն որոշման նշված 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները հիմնավորվում են նայն կարգի 27-րդ կետի I-ին ենթակետով (կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ցածր ռիսկայեության աստիճանի (1 կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման ավտոմոբիլային ճանապարհների միջին նորոգման ընթացիկ պահպանման, տարածքների բարեկարգման այլ փոքրածավալ շինարարական աշխատանքները, որոնք կարող են իրականացվել կառուցապատողի կողմից՝ առանց նախագծման և շինարարության թույլտվությունների). թիվ 4 հավելվածի N 1 ցանկի 1 ին կետով՝ սույն ցանկում ներասված են օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 Ն որոշմսն N 1 հավելվածի (այսուհետ N 1 հավելված, 26-րդ կետի I ին ենթակետով, 27-րդ կետի 1-ին ենթակետով և 136-րդ կետով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող ընթացիկ նորոգման, միջին նորոգման, ընթացիկ պահպանման, ներքին հարդարման բարեկարգման և այլ շինարարական աշխատանքները) և նույն Ցանկի 7-րդ կնտի 11-րդ ենթակետի ժդ. պարբերության (7. Շինություններում (կառուցվածքներում) ընթացիկ նորոգման, միջին նորոգման, ընթացիկ պահպանման աշխատանքներն են՝ 11) ավտոմոբիլային ճանապարհներ, համայնքների փողոցներ՝ ժդ. ծածկի վերին շերտի մաշված և քայքայված հատվածների վերականգնում, անհրաժեշտության դեպքում նորոգվող հատվածի փոսային նորոգում, ֆրեզում, հարթեցնող շերտի տեղադրում,

առանձին հատվածների պատվածքի քայքայված տեղամասերի փոխարինում նորոգվող ճանապարհահատվածի մակերեսի ոչ ավելի, քան 3 % ի չափով)

Իսկ Նոր կյանքի համայնքապետարանի կողմից ներկայացված դիրքորոշման մեջ հիշատակված 596-Ն որոշման 26-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված միջինից բարձր ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ Ш կատեգորիա հասկացությունը հիմնավորվում է 27-րդ կետի 3-րդ ենթակետով, ըստ որի կարգի 26-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) օբյեկտների թվին են դասվում II և IV կատեգորիաների ռիսկայնության օբյեկտների միջակայքում բնութագրող ցուցանիշներ ունեցող օբյեկտները, որոնց նախագծային փաստաթղթերը ենթակա են պարզ փորձաքննության:

Միջին ռիսկայնության /2-րդ կատեգորիայի/ օբյեկտները սահմանվում են 596 Ն որոշման ցանկ N 2-ի 3-րդ կետով, իսկ բարձր ռիսկայնության /4-րդ կատեգորիայի/ օբյեկտները ցանկ N 3-ի 3-րդ և 4-րդ կետերով:

ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կատարվելիք ասֆալտապատ ճանապարհների փոսային նորոգման աշխատանքները չեն հանդիսանում ոչ միջին ռիսկայնության 2-րդ կատեգորիայի/, ոչ բարձր ռիսկայնության /4-րդ կատեգորիայի/, ոչ էլ II և IV կատեգորիաների ռիսկայնության օբյեկտների միջակայքում բնութագրող ցուցանիշներ ունեցող օբյեկտների աշխատանքներ, այլ հանդիսանում են ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) օբյեկտների աշխատանքներ, ուստի շինարարության իրականացման լիցենզիայի տրանսպորտային ներդիրի պահանջը անհիմն է:

«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ընթացակարգի շրջանակներում, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 32-րդ էին ենթակետի և ընթացակարգի հրավերի պահանջները ներկայացրել է ընթացակարգին մասնակցության դիմում-հայտարարություն, որով հավաստել է, որ կազմակերպությունը բավարարում է ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում: Ընկերությունն ունի համապատասխան մասնագիտական ունակություններ, մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ, նշված աշխատանքը պատշաճ որակով կատարելու համար:

«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն մնում է նույն կարծիքին և ևս մեկ անգամ հայտնում դիրքորոշում, որ ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովի կողմից խախտվել է հաղթող ընկերության՝ «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի օրինական իրավունքները օրենքին հակասող պատճառաբանություններով մերժելով ընկերության կողմից ներկայացված ընթացակարգի մասնակցության հայտը: Ինչպես նաև պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:»:

3. <u>ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.07.2020թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/10876-2021 գրությամբ դիմել է ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 02.07.2021թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 06.07.2020թ.-ին թիվ 012-0171/21 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 02.07.2021 թվականի թիվ ԲՔԱ-ԼՕ/Օ/10747-2021 գրության, Ձեզ ենք ուղարկում ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանք համայնքապեաարանի կողմից կազմված ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ -21/02 ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր փաստաթղթերը: Հայտնում ենք, որ ընթացակարգի բոլոր գործողությունների ժամանական պահպանվել է գործող կարգը: Ձեզ է ուղարկվում նաև նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, որից պարզ է դառնում, որ նշված աշխատանքները փաստացի ճանապարհի վերանորգում է (փոսալցում), որը պահանջում է հատուկ մասնագիտական կարողություններ և հանձնաժողովի պահանջը գնման գործընթացի մասնակիցներին, ինչպես նշում է «ԱՅ ՔՈՆՍԹԲԱՔՇՆ» ընկերությունը, բոլորովին էլ կամայնականություն չէ և նշված աշխատանքները չեն կարող դասակարգվել Նո 596-Ն որոշման 26-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված ցածր ռիսկայնության աստիճանի /1-ին կատեգորիայի/ թվին, ինչպես ներկայացնում է «ԱՅ ՔՈՆՍԹԲԱՔՇՆ» ընկերությունը, այլ դասկարգվում են 3-րդ ենթակետով սահմանված միջինից բարձր ռիսկայնության աստիճանի /3-րդ կատեգորայի/ օբյեկտների թվին:

Նշված աշխատանքների համար մասնագիտական/ տրանսպորտային շինարարության իրականացման/ լիցենզիայի առակայությունը պարտադիր է:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/59 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարանի կողմից ասֆալտապատ փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.06.2021թ.-ին հայտարարվել է «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ -21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերով սահմանված չէ լիցենզիայի ներկայացման պահանջ:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտում բացակայում է համապատասխան շինարարի լիցենզիան:

iv. Նույն կետի համաձայն՝ Պատվիրատուն Ընկերությանը տվել է ժամանակ նշված փաստաթղթերը ներկայացնելու համար, սակայն դրանք այդպես էլ չեն ներկայացվել:

v. Արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ համապատասխան լիցենզիայի բացակայության պատճառով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 02.07.2021թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ … հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 11-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն

դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.7-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.8-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.7-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման

բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող կամ վերջինիս լիազորած անձը՝ ներկայացնելով այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, այդ թվում՝ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարանի կողմից ասֆալտապատ փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.06.2021թ.-ին հայտարարված «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ -21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով չի սահմանվել լիցենզիայի ներկայացման պահանջ: Սակայն Հանձնաժողովի 24.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտում բացակայում է համապատասխան շինարարի լիցենզիան, ինչով պայմանավորված Պատվիրատուն Ընկերությանը տվել է ժամանակ նշված փաստաթղթերը ներկայացնելու համար, սակայն դրանք այդպես էլ չեն ներկայացվել, ինչից ելնելով Հանձնաժողովը որոշել է «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտը մերժել՝ համապատասխան լիցենզիայի բացակայության պատճառով:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ -21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերը, Հանձնաժողովի 24.06.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությունը և «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտը, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից, Ընկերության հայտը մերժելու մասին կայացված որոշման արդյունքում, թույլ է տրվել Օրենքի 34-րդ հոդվածով, Կարգի 41-րդ կետով և Հրավերի 8.7-րդ կետով սահմանված պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգի հրավերով աշխատանքների կատարման համար լիցենզիա ներկայացնելու որևէ պահանջ չի սահմանվել:

Ուստի նման պայմաններում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ ՀՀ Շիրակի մարզի Նոր Կյանքի համայնքապետարանի կողմից ասֆալտապատ փողոցների փոսային նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.06.2021թ.-ին հայտարարված «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ -21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում կայացնելով, գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը համապատասխանում է Հրավերի պահանջներին, որպիսի պայմաններում Ընկերության կողմից ներկայացված՝ «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ-21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2021թ.-ին թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը

դադարեցնելու /չեղյալ հայտարարելու/ պահանջի մասին բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Անդրադառնալով բողոքի՝ «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ին ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու մասին ներկայացված պահանջին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, այն փաստի հաշվառմամբ, որ Ընկերությունը ընտրված մասնակից կարող է ճանաչվել Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 40-րդ կետի դրույթներով սահմանված պահանջների պատշաճ կատարմամբ, որն Օրենքի 26-րդ հոդվածի հիման վրա իրականացնում է գնահատող հանձնաժողովը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Այ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից 02.07.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/59 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:
2. Պարտավորեցնել «ՇՄՆԿՀ-ԳՀԱՇՁԲ -21/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.06.2021թ.-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումները:
3. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**